



FINCA®

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն (իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոսի 2ա), (այսուհետ՝ «Կազմակերպիչ»), հրավիրում է Ձեզ (այսուհետ՝ «Հայտատու») ներկայացնելու գնառաջարկ կազմակերպության գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի մշտական մաքրման և մաքրության ապահովման ծառայություններ մատուցող ընկերության ընտրության բաց մրցույթին:

Հայտերն ընդունելու սկզբնաժամկետ՝ 25 օգոստոս 2020թ.


Հայտերն ընդունելու վերջնաժամկետ՝ 25 սեպտեմբեր 2020թ.

Մրցույթի հայտերն ամփոփելու նիստի օրը՝ 28 սեպտեմբեր 2020թ 12:00:

Ծածկագիր՝ 20/002


Մաքրման ենթակա տարածքների մասին տեղեկատվություն՝

Հ/Հ	Գրասենյակի հասցե		Մակերեսը (քմ)
1.	Գլխամասային Գրասենյակ	ք. Երևան, Ագաթանգեղոսի 2ա	1466,3
2.	Աբովյան	ՀՀ, ք. Աբովյան, Հանրապետության 22/14	490.65
3.	Ազանթագեղոս	ք. Երևան, Ագաթանգեղոսի 2ա	440
4.	Ալավերդի	ՀՀ, ք. Ալավերդի, Թումանյան փ., 51/2	71.3
5.	Աշոցք	ՀՀ, Աշոցք համայնքի Ռուդակով փ, 3	39.8
6.	Աշտարակ	ՀՀ, ք. Աշտարակ, Մխակյան փ., 14/48Բ	215.5
7.	Ապարան	ՀՀ, ք. Ապարան, Բաղրամյան փ., 24	133
8.	Արարատ	ՀՀ, ք. Արարատ, Աղբյուր Սերոբի 10, 10/1-1	167.5
9.	Արթիկի	ՀՀ, ք. Արթիկ, Անկախության փ., 29/1	149.81
10.	Արմավիր	ՀՀ, ք. Արմավիր, Երևանյան փ., 33/3	307.3
11.	Արտաշատ	ՀՀ, ք. Արտաշատ, Շահումյան փ., 33	215
12.	Բերդ	ՀՀ, ք. Բերդ, Հ. Նահապետ փ., 8	110.75



**FINCA®**

13.	Գավառ	ՀՀ, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 4	111.79
14.	Գյումրի	ՀՀ, ք. Գյումրի, Խրիմյան Հայրիկ փ., 46ա	256.12
15.	Գորիս	ՀՀ, ք. Գորիս, Մաշտոցի 5	82.3
16.	Դիլիջան	ՀՀ, ք. Դիլիջան, Սյասնիկյան 30Ե	33.6
17.	Եղեգնաձոր	ՀՀ, ք. Եղեգնաձոր, Անդրանիկի 10/1	108.1
18.	Եղվարդի	ՀՀ, ք. Եղվարդ, Չարենց, թիվ 23/2	135.10
19.	Էջմիածին	ՀՀ, ք. Էջմիածին, Խորենացի փ., 8 (հին հասցե՝ Աթարբեկյան փ., 8)	291.9
20.	Թալին	ՀՀ, ք. Թալին, Շահումյան 1	169.65
21.	Իջևան	ՀՀ, ք. Իջևան, Վալանսի փ., 6/2	315.8
22.	Կապան	ՀՀ, ք. Կապան, Շահումյան փ., 2/1 թիվ 62	91.2
23.	Կոմիտաս	ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող., 59 շենք, 5	254.2
24.	Հրազդան	ՀՀ, ք. Հրազդան, Օգոստոսի 23փ-ի, 22	230.18
25.	Ճամբարակ	ՀՀ, ք. Հրազդան, Օգոստոսի 23փ-ի, 22	48.40
26.	Մալաթիա	ՀՀ, ք. Երևան, Բաֆֆու փ., 29/3	461.9
27.	Մասիս	ՀՀ, ք. Մասիս, Հանրապետության փ., 5/1	124.6
28.	Մարալիկ	ՀՀ, ք. Մարալիկ, Հր. Շահինյան փ., տ. 16	282.9
29.	Մարտուն	ՀՀ, ք. Մարտունի, Սյասնիկյան 8	83.70
30.	Մեղրի	ՀՀ, ք. Մեղրի, Փարամազ 4/6	84
31.	Սյասնիկյան	ՀՀ, գ. Սյասնիկյան, Սյասնիկյան փ., թիվ 4 շենք	125.4
32.	Նոյեմբերյան	ՀՀ, ք. Նոյեմբերյան, Բարեկամության 2	156.34
33.	Շիրակ	ՀՀ, ք. Գյումրի, Պ. Սևակ 8/4	206.97
34.	Սիսիան	ՀՀ, ք. Սիսիան, Գ.Նժդեհի 17	65.53
35.	Սպիտակ	ՀՀ, ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան փ. 4	61.7
36.	Ստեփանավան	ՀՀ, ք. Ստեփանավան, Մուրթ-Նշանի 12բ	141.1
37.	Վանաձոր 1	ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պ., 47ա	218.3





38.	Վարդենիս	ՀՀ, ք. Վարդենիս, Ն. Անդրեասյան փ., թ. 6/5	77.34
39.	Վեդի	ՀՀ, ք. Վեդի, Արարատյան փ., 54/6	155.4
40.	Տաշիր	ՀՀ, ք. Տաշիր, Երևանյան փ., թիվ 199	42


Իրականացվող ծառայությունների ցանկ՝

Մաքրուհիների այցելությունը նշված տարածքներ օրական երկու անգամ (առավոտյան՝ 09:00, կեսօրից հետո՝ 14:00), բացառությամբ Գլխամասային գրասենյակի: Գլխամասային Գրասենյակում անհրաժեշտ է մաքրուհիներն աշխատեն հերթափոխով (2 հոգի) 08:30 -18:00:

- Անհրաժեշտ մաքրող և ախտահանող նյութերի և պարագաների տրամադրում (Պատվիրատուի կողմից հաստատվող)
- Ցանկացած գույքի, տարածքի՝ հատուկ և նախատեսված միջոցներով ու պարագաներով մաքրության իրականացում
- Ներքին ապակյա մակերեսների մաքրության ապահովում Գրասենյակային տարածքների մաքրության ապահովում
- Սպասարկման սրահների մաքրության ապահովում
- Սպասարկման սրահների և գրասենյակային տարածքների հատակի մաքրության ապահովում
- Աստիճանավանդակի մաքրության ապահովում
- Սպասարկման սրահների և գրասենյակային տարածքների կահույքի մաքրության ապահովում
- Սպասարկման սրահների և գրասենյակային տարածքների մաքրության ապահովում
- Սանհանգույցի մաքրում և ախտահանում՝ օրական 2 անգամ
- Աղբամանների դատարկում օրական 2 անգամ
- Արտաքին ցուցափեղկերի մաքրում ամիսը 1 անգամ
- Պատուհանների մաքրում 3 ամիսը 1 անգամ
- Ֆասսադային ապակիների լվացում 3 ամիսը 1 անգամ
- Տարածքների հիմնովին մաքրում և ախտահանում տարեկան երկու անգամ

Դիմելու ընթացակարգ՝

Բաց մրցույթին մասնակցելու պայմանները և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, առաջարկի պայմանները(այսուհետ՝ Գնառաջարկ), ինչպես նաև այլ մանրամասները ներկայացված են ստորև:






FINCA®

- Հայտատուն ինքնուրույն է հոգում Գնառաջարկի պատրաստման և բաց մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի (միասին այսուհետ՝ Մասնակցության հայտ) ներկայացման ծախսերը, իսկ Կազմակերպիչը որևէ պատասխանատվություն և պարտավորություն չի կրում այդ ծախսերի համար՝ անկախ մրցույթի ընթացքից և արդյունքներից:
- Կազմակերպիչն իրավունք ունի մերժել Մասնակցության հայտը, եթե Հայտատուն ուղղակի կամ անուղղակի կերպով խախտել է Կազմակերպչի կողմից սահմանված պայմանները:
- Գնառաջարկը բնօրինակի և կրկնօրինակի հետ միասին («Բնօրինակ» և «Պատճեն» նշումներով) փակ և կնքված առանձին ծրարներով պետք է հասցեագրվի.
«ՖԻՆՔԱ» ՈԻՎԿ ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան, 0023, Ագաթանգեղոսի 2ա

Հեռ. +37412 555-555

- Ծրարների վրա պետք է նշված լինի կազմակերպության անվանումը, իրավաբանական և գործունեության հասցեները, հեռախոսահամարը, էլ. փոստը, դեկավարի անունը, պաշտոնը, մրցույթի անունը և կոդը: Գնառաջարկը պետք է ներկայացնել «ՖԻՆՔԱ» ՈԻՎԿ ՓԲԸ հասցեով ոչ ուշ, քան 2020թ. սեպտեմբերի 25-ը, ժամը 12:00 (Երևանի ժամանակով):
- Գնառաջարկը պետք է ներկայացվի ՀՀ դրամով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը ներառյալ:
- Գները պետք է լինեն վերջնական ամրագրված և ինչպես մինչև պայմանագրի կնքումը, այնպես էլ պայմանագրի գործողության ընթացքում ենթակա չլինեն փոփոխման, եթե այլ բան չնախատեսվի պայմանագրով:
- Գնառաջարկը լրացնելիս Հայտատուին իրավունք է վերապահվում լրացնել/մանրամասնել գնառաջարկի ցանկացած կետ/դրույթ՝ թողնելով անփոփոխ պահանջվող ապրանքների և ծառայությունների բովանդակությունը:
- Հայտատուն պարտավոր է լրացնել
 - Ծառայությունների մատուցման մանրամասներ՝ որքան աշխատակից և որքան աշխատաժամ է նախատեսվում տրամադրել համագործակցության դեպքում,
 - Տրամադրվող նյութերի վերաբերյալ տեղեկատվություն՝ ինչ մաքրող միջոցներ (ցանկ՝ ապրանքանիշերով) և մեկանգամյա հիգիենայի պարագաներ (ցանկ՝ ապրանքանիշերով) են տրամադրվելու համագործակցության դեպքում:
- Հայտատուն կարող է ներկայացնել միայն մեկ գնառաջարկ համաձայն Հայտարարությունում նշված Ծառայությունների ցանկի:
- Մրցույթի մեկնարկային գին և նախավճար չի սահմանվում:





FINCA®

- Սույն մրցույթի Հայտարարությամբ նշված վերջնաժամկետից ուշ ներկայացված գնառաջարկները կմերժվեն:
- Հայտատուները մրցույթի ամփոփման և արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը կստանան մրցույթի հայտերի ամփոփումից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:


Պարտադիր պայմաններ.

- Հայտատուն պետք է ունենա
 - առնվազն 3 տարվա գործունեություն
 - 40-ից ավելի աշխատակիցների՝ մաքրուհիների առկայություն
 - Առնվազն՝ 3 կազմակերպության (250 և ավելի աշխատակիցներով) հետ համագործակցության փորձ
 - Բանկային, ֆինանսական կամ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության փորձը ցանկալի է
- Կազմակերպչի հետ փոխկապակցված Հայտատուների մասնակցությունն արգելվում է,
- Հայտերը, որոնք կհամարվեն ըստ էության մրցույթի պայմաններին համապատասխանող, կգնահատվեն ըստ առաջարկում ներկայացված պայմանների:
- Գնահատումը կկատարվի ըստ ներկայացված տեխնիկական և գնային առաջարկների:
- Տեխնիկական առաջարկն իր մեջ ներառում է կազմակերպության փորձ, շուկայում զբաղեցրած դիրք և այլն
- մրցույթի հաղթողի հետ կնքվում է պայմանագիր մեկ տարի ժամկետով՝ մրցույթի ավարտից և ամփոփումից հետո՝ 10 օրվա ընթացքում
- լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև մրցույթի մանրամասներին ծանոթանալու համար դիմել հետևյալ հասցեով՝ Anush.samvelyan@finca.am

ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերն են՝

1. Գնառաջարկ,
2. Պետական գրանցման վկայականի պատճեն իր ներդիրներով՝ կնքված կազմակերպության կնիքով,
3. Տվյալներ կազմակերպության վավերապայմանների մասին (կցված է),
4. Տնօրենի անձնագրի պատճեն,
5. Հայտարարագիր այն մասին, որ տրամադրված տվյալները ճիշտ և ամբողջական են ու համապատասխանում են իրականությանը (կցված է),
6. Գործընկեր կազմակերպությունների ցանկ, որոնց հայտատուն տրամադրել է նույնատիպ ապրանքներ/ծառայություններ,






FINCA®

8. էլ-փոստ. _____

Ստորագրված և կնքված է՝

(անուն, ազգանուն, պաշտոն)





ՍՈՒՅՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆ Է

Սույնով հայտարարում և հավաստում եմ հետևյալը.

1. Ես՝ _____, _____ և _____

_____ (ընկերության/ կազմակերպության լրիվ անվանումը՝ ըստ պետական գրանցման վկայականի)

(այսուհետ՝ Կազմակերպություն), որի ղեկավարն եմ հանդիսանում, սնանկ չեմք, սնանկության, լուծարման կամ վերակազմակերպման գործընթացում չենք գտնվում, իմ և Կազմակերպության գույքը ծանրաբեռնված չէ այլ անձանց իրավունքներով, ձեռնարկատիրական գործունեությունը կասեցված չէ,

2. Ես և Կազմակերպությունը ընդգրկված չենք որևէ դատական գործում, ինչպես նաև դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացում, դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով մեղավոր չենք ճանաչվել պրոֆեսիոնալ գործունեության շրջանակում իրավախախտում կատարելու մեջ,

3. ստորև նշված ամսաթվի դրությամբ ես, իմ ընտանիքի անդամները և Կազմակերպությունը չունենք փաստացի և/կամ հնարավոր շահերի բախում ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի՝ որպես Սրբույթի կազմակերպչի հետ, ինչը կարող էր սահմանափակել Սրբույթի կազմակերպչի կողմից մրցութային հայտերի անկողմնակալ և անաչառ գնահատումը, իսկ այդպիսիք հայտնաբերելու դեպքում պարտավորվում եմ անմիջապես գրավոր ձևով տեղեկացնել Սրբույթի կազմակերպչին,

4. Ես և Կազմակերպությունը երբևէ չենք մասնակցել որևէ ահաբեկչական գործունեության, ինչպես նաև փողերի լվացման հետ կապված գործարքների, դատարանի վերջնական ուժի մեջ մտած դատավճռով մեղավոր չենք ճանաչվել խարդախություն կատարելու, կոռուպցիոն գործունեության կամ հանցավոր խմբավորման մեջ ներգրավվելու մեջ,

5. այն դեպքում, եթե տեղի կունենա վերը նշված դրույթներից որևէ մեկի հետ կապված փոփոխություն, ես պարտավորվում եմ անմիջապես գրավոր ձևով տեղեկացնել Սրբույթի կազմակերպչին:

Ամսաթիվ _____

Ստորագրված և կնքված է

Անուն, ազգանուն, պաշտոնը

Ստորագրություն

